

<https://doi.org/10.46991/hc.2025.si1.158>

Western Armenian phrases and their teaching as a means of enriching students' vocabulary

Betty Kilerjian

<https://orcid.org/0009-0008-0939-0929>

NAS RA Employee of the Institute of Language, PhD student

bettykilerjian@gmail.com

Keywords - Western Armenian, phrase, phrase unit, vocabulary, language skills, creative thinking, teaching method.

Phrases can appear in a sentence expressing figurative and literal meanings. Phrases with constituents expressing formative units are considered by many researchers to be the colorful side of the language.

Therefore, students' language should be taught in such a way that it can lead to the development of skills. In fact, the level of mastery of phrases serves as an important indicator of target language proficiency.

Teaching and learning phrases units helps to reveal the cognitive processes of the mind in creative thinking.

At the same time, it contributes to the formation of other language skills: speaking, reading, etc. It can also lead to significant gains in vocabulary and stylistic awareness, which includes conscious perception and understanding of changes in the basic form and meaning of sentences, the stylistic coherence of the original text, and the creation of new meaning in the overall original text.

The teaching of phrases at school has the main purpose of enriching students' vocabulary with figurative expressions, as well as introducing the history of the emergence of phrases, informing students about Armenian dialects, folklore, traditions, and myths.

The article studies the role of Western Armenian phrases in the language teaching process and the modern methods of teaching them. Special attention is paid to the role of phrases as one of the indicators of language proficiency. With this work, we try to show what modern methods can be used to teach Western Armenian phrases, based on the fact that Western Armenian textbooks do not teach this topic.



Western Armenian phrases and their teaching as a means of enriching students' vocabulary
Արեւմտահայերէն դարձուածքներու ուսուցումը որպէս աշակերտներու բառապաշարի հարստացման միջոց
Արեւմտահայերէն դարձուածքներու ուսուցումը որպէս աշակերտներու
բառապաշարի հարստացման միջոց

Պէթթի Քիլերճեան

ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտի աշխատակից, հայցորդ

Հիմնաբառեր – Արեւմտահայերէն,
դարձուածք, դարձուածային միաւոր,
բառապաշար, լեզուական հմտութիւններ,
ստեղծագործական մտածողութիւն, դասաւանդ-
ման մեթոդ:

Դարձուածքները կարող են յայտնուիլ նախադասութեան մէջ յայտնելով փոխաբերական եւ ուղղակի իմաստներ: Դարձուածային միաւորներ արտայայտող բաղադրիչներ ունեցող դարձուածքները շատ հետազոտողներու կողմէ կը համարուին լեզուի գունաւոր կողմը:

Հետեւաբար, աշակերտներուն լեզուն պէտք է այնպէս սորվեցնել, որ կարողանան յանգեցնել հմտութիւններու զարգացման: Փաստօրէն, դարձուածքներու տիրապետման մակարդակը կը ծառայէ որպէս թիրախ լեզուի իմացութեան կարելոր ցուցիչ:

Դարձուածային միաւորներու ուսուցումն ու սորվիլը կ'օգնէ բացայայտել միտքի ճանաչողական գործընթացները ստեղծագործական մտածողութեան մէջ:

Միեւնոյն ժամանակ, այն կը նպաստէ այլ լեզուական հմտութիւններու ձեւաւորման՝ խօսելու, կարդալու եւ այլն: Նաեւ կարող է յանգեցնել զգալի ձեռքբերումներու՝ բառապաշարի եւ ոճական գիտակցութեան մէջ, որ կը ներառէ գիտակցուած ընկալում եւ ըմբռնում՝ դարձուածքներու հիմնական ձեւի եւ իմաստի փոփոխութիւնները, բնագիրի ոճական համախմբուածութիւնը եւ ընդհանուր բնագիրին նոր իմաստի ստեղծումը:

Դպրոցին մէջ դարձուածքներու ուսուցումը գերազանցապէս նպատակ ունի հարստացնելու աշակերտներու բառապաշարը պատկերաւոր արտայայտչամիջոցներով, ինչպէս նաեւ, ծանօթացնելով դարձուածքներու առաջացման պատմութեան, աշակերտներուն տեղեկութիւններ հաղորդելու հայերէնի բարբառներու, ժողովրդական բանահիւսութեան, աւանդոյթներու, առասպելներու վերաբերեալ:

Յօդուածը կ'ուսումնասիրէ արեւմտահայերէն դարձուածքներու դերը լեզուի դասաւանդման գործընթացին մէջ եւ անոնց ուսուցանման ժամանակակից մեթոդները: Յատուկ ուշադրութիւն կը դարձուի դարձուածքներու դերին՝ որպէս լեզուի իմացութեան մակարդակի ցուցիչներէն մէկը: Սոյն աշխատանքով կը փորձենք ցոյց տալ, թէ ինչ ժամանակակից մեթոդներ կարելի է կիրառել արեւմտահայերէն դարձուածքները

*նւնոցանելո՜ւ հաւաք, հիւք ընդունելով այն փաւտը, որ արեւմտահայերէն
դաւազիրքերուն մէջ կը բացակային տուեալ թեմայի նւնոցումը:*

Западноармянские фразы и их преподавание как средство обогащения словарного запаса учащихся

Փատի Կիլլերչիան

НАН РА Сотрудник в Институт языка, аспирант

Ключевые слова - западноармянский язык, словосочетание, фразеологизм, словарный запас, языковые навыки, творческое мышление, метод обучения.

Фразы могут появляться в предложении, выражая переносные и прямые значения. Фразы с компонентами, выражающими формативные единицы, многими исследователями считаются красочной стороной языка.

Поэтому язык учащихся должен преподаваться таким образом, чтобы это могло привести к развитию навыков. Фактически, уровень владения фразами служит важным показателем владения целевым языком.

Преподавание и изучение фразовых единиц помогает раскрыть когнитивные процессы ума в творческом мышлении.

В то же время это способствует формированию других языковых навыков: говорения, чтения и т. д. Это также может привести к значительному росту словарного запаса и стилистической осведомленности, которая включает осознанное восприятие и понимание изменений в базовой форме и значении предложений, стилистической связности исходного текста и создания нового смысла в общем исходном тексте.

Преподавание фраз в школе имеет основной целью обогащение словарного запаса учащихся образными выражениями, а также знакомство с историей возникновения фраз, информирование учащихся об армянских диалектах, фольклоре, традициях и мифах.

В статье изучается роль западноармянских фраз в процессе обучения языку и современные методы их преподавания. Особое внимание уделяется роли фраз как одному из показателей владения языком. В данной работе мы пытаемся показать, какие современные методы можно использовать для обучения западноармянским фразам, исходя из того, что в учебниках западноармянского языка эта тема не преподается.

Մուտք: Թեմայի արդիականությունը կը կայանայ անով, որ դարձուածքները լեզուի կարեւոր բաղադրիչ են, սակայն արեւմտահայերէն դասագիրքերուն մէջ կը բացակային: Հետեւաբար փորձած ենք ներկայացնել շարք մը մեթոդներ՝ որպէս օժանդակ ռեսուրսներ, որոնք կ'օգնեն ուսուցիչին մատչելի եւ հետաքրքրական ձեւով դասաւանդել արեւմտահայերէն դարձուածքները:

Յօդուածի տեսագործնական նշանակութիւնը կը կայանայ անով, որ մեր կողմէ առաջարկուած մեթոդները ըստ էութեան օգտակար կ'ըլլան ուսուցիչներուն աշակերտին հաճելի մեթոդներով դասաւանդել արեւմտահայերէն դարձուածքները: Ինչպէս նաեւ պայմանաւորուած է անով, որ անոր արդիւնքները կարող են օգտակար ըլլալ լեզուի բառապաշարի իւրացման, բանաւոր եւ գրաւոր խօսքի հմտութիւնները կատարելագործելու, ուսուցման մեթոդները բարելաւելու, դասընթացքը հետաքրքիր դարձնելու համար:

Յօդուածի նպատակն ու խնդիրն է ներկայացնել դարձուածքի ուսուցման դերն ու նշանակութիւնը որպէս բառապաշարի հարստացման միջոց:

Լեզուն եւ խօսքը ծագած ու զարգացած են մարդու բազմաբնոյթ գործունէութեան ընթացքին՝ դառնալով այդ գործունէութեան իրականացման գլխաւոր գործօնները: «Խօսքի զարգացումը, անոր մշակումը, կատարելագործումը եւ հարստացումն է այն հաշուով, որ ապահովուի խօսքի ճիշդ, նպատակային ու գեղեցիկ կառուցումը թէ՛ բառերու ընտրութեան, թէ՛ քերականական կառուցուածքի եւ թէ՛ առհասարակ խօսքի կառուցուածքի բոլոր բաղադրիչներու, բոլոր օրինաչափութիւններու տեսակէտէն» [Աբրահամյան 1973, էջ 75]:

Աշակերտի խօսքի զարգացումը լեզուի կեդրոնական հարցն է [Գյուլբուդաղյան 1978, էջ 55]: Խօսքի միջոցով աշակերտը զգայական ճանաչողութեան սահմանափակ հնարաւորութիւնէն անցում կը կատարէ դէպի տրամաբանական մտածողութիւն:

Դարձուածաբանութիւնը հայ լեզուաբանութեան (եւ ոչ միայն հայ) ամենաերիտասարդ բնագաւառներէն է: Ըստ Մ. Աբեղեանի, ան կը նշէ՝ որ դարձուածքները կ'առաջանան բառերու ազատ կապակցութիւններէ՝ իմաստափոխութեամբ «Բառերու այսպիսի նորիմաստ կապակցութիւնները սովորաբար կը կոչուին դարձուածքներ, որոնք, սակայն, մէկ բառի նշանակութիւն կը ստանան եւ կարող են նաեւ մէկ բարդ բառ համարուիլ» [Աբեղյան 1974, 124]:

Դարձուածքները լեզուին մէջ անփոխարինելի դեր ունին, որովհետեւ խօսքին «աղ եւ համեմունք» [Խ. Բաղիկյան 2000, 10] տուող միաւորներ են: Դարձուածքները լեզուին մէջ առկայ փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող կայուն կապակցութիւններ են, որոնք անբաժանելի, իմաստով ամբողջական բառակապակցութիւններ կամ նախադասութիւններ են (ինչպէս՝ վերաիմաստաւորուած յարադիր բայեր, թեւաւոր

խօսքեր, երդման, հանդիմանական, առաձասացուածքային, հեղինակային արտայայտութիւններ, անեծքներ, օրհնանքներ, մաղթանքներ, շրջասոյթներ):

Պ. Պետիրեանը կը գրէ. «Դարձուածքներու առաջացման անսպառ աղբիւրը հէնց ինքը՝ կենդանի ընդհանուր լեզուն է՝ իր կիրառութեան բոլոր ոլորտներով... Տնտեսագիտութիւն, գիտութիւն ու տեխնիկա, քաղաքական աշխատանք ու կենցաղ, ռադիօ, հեռուստատեսութիւն ու մամուլ, գրականութիւն ու արուեստ, ինքնուրոյն ստեղծագործութիւն ու թարգմանութիւն, մեր ժողովրդի հատուածներու, ինչպէս նաեւ ժողովուրդներու՝ օրեցօր աւելի ու աւելի սերտացող շփումներ, արդիականութիւն ու պատմութիւն,– ահա այն «ջրանցքերը», որոնցմով «առու-առու, վտակ-վտակ» կու գայ ընդհանուր գետը կը յորդացնեն Դ-ները» [Բեդիրյան 1973, 49-50]:

Իր նախապատրաստական գոյցին մէջ ուսուցիչը աշակերտներուն պէտք է բացատրէ, որ դարձուածքները ժողովրդական մտածողութեան արդիւնք են ու թէեւ առաջացած են խօսակցական լեզուին մէջ, սակայն ներթափանցած են գրական լեզու՝ հարստացնելով այն պատկերաւոր խօսքի միաւորներով: Դարձուածքներու առաջացման հիմքին մէջ մարդու կենսափորձն է, կենսափիլիսոփայութիւնը, բնութեան երեւոյթներու ճանաչումն ու կենդանիներու վարքագիծին տեղեակ ըլլալը:

Դարձուածքները կը հանդիպին իւրաքանչիւր լեզուի մէջ: Դարձուածքային արտայայտութիւններ սորվիլը եւ գործածելը իւրացման կարելոր է բարդ ոլորտներէն են, ուստի անհրաժեշտ է որոշակի հմտութեան աստիճան: Արեւմտահայերէնը բացառութիւն չէ, քանի որ այն ունի մեծ թիւով դարձուածքներ, որոնք լայնօրէն կ'օգտագործուին եւ առօրեայ խօսքին, եւ՝ ակադեմիական աշխատութիւններուն մէջ:

Դարձուածքը կառուցուածքով երկու կամ աւելի բառերու կայուն, իմաստով ամբողջական վերաիմաստաւորուած այնպիսի կապակցութիւն է, որ խօսքին մէջ կը վերարտադրուի իբրեւ լեզուական պատրաստի միաւոր [Սուքիասյան 1999, 296]:

Դարձուածքը կը սահմանեն նաեւ որպէս փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցութիւն կամ դարձուածքային նշանակութեամբ կայուն կապակցութիւն կամ կայուն արտայայտութիւն [Սուքիասյան, Գալստյան 1975, 6]:

Բառապաշարի այս մասը, հանդիսանալով մշակոյթի կարելոր տարր, միեւնոյն ժամանակ ցոյց կու տայ աշակերտներու լեզուի սահունութիւնն ու արդիւնաւետութիւնը արեւմտահայերէնի օգտագործման մէջ:

Աշակերտներու բառապաշարի վրայ տարուող աշխատանքը պէտք չէ սահմանափակուի անոնց իմացած բառերու քանակի սոսկ մեծացումով: Այդ աշխատանքը պէտք է տանիլ՝ ապահովելով հետեւեալ պահանջները.

- աշակերտներու բառապաշարի ոչ միայն քերականական, այլեւ որակական կազմի հարստացում,
- բառերու դիպուկ գործածութիւն,

• Բառապաշարի մաքրութիւն [Աբրահամյան 1973, էջ 13]:

Արեւմտահայերէնը կը համարուի խիստ բառակապակցութեան լեզու, եւ արեւմտահայերէն օգտագործողները առատօրէն կ'օգտագործեն դարձուածային արտայայտութիւնները տարբեր ոլորտներու մէջ, ներառեալ լրատուամիջոցները, գրականութիւնը եւ նաեւ խօսակցական լեզուն:

Արեւմտահայերէն դարձուածքաբանական միաւորներու եւ ասացուածքներու իմացութիւնը կը հարստացնէ աշակերտներու բառապաշարը եւ կ'օգնէ անոնց գիտակցիլ արեւմտահայերէնի փոխաբերական համակարգը եւ կ'ընդլայնէ լեզուամշակութային իրաւասութիւնը:

Աւելին, դարձուածքաբանական միաւորներու դերը աշակերտներու բառապաշարի եւ լեզուամշակութային կարողութիւններու ձեւաւորման գործին մէջ շատ կարեւոր է, քանի որ անոնք կ'ամփոփեն ազգային, երկրի մշակութային հայեացքը: Լեզուներու ուսուցման օգտագործման վրայ հիմնուած տեսութիւնները կը յուշեն, որ դարձուածքաբանութիւնը պէտք է ուսումնասիրուի որպէս բառապաշարի մաս:

Ըստ Խ. Բաղիկեանին. «Դարձուածքաբանական գրականութեան մէջ կը նշուի, որ «բայական ԴՄ-ներու բայ բաղադրիչներու քերականական կարգերու՝ սեռի, դէմքի, ժամանակի, հաստատման-ժխտման, եղանակի հակադրութիւններուն մէջ դարձուածքներու իմաստներու եւ իմաստափոխութիւններու ողջ աշխարհ մը կայ թաքնուած» [Բաղիկյան 1986, էջ 225]: Հետեւաբար դարձուածքներու ուսուցումը շատ կարեւոր եւ էական դեր կը խաղայ աշակերտներու միտքի զարգացման, երեւակայութեան ընդլայնման, լեզուի սահունացման եւ բառապաշարի հարստացման գործին մէջ:

Ըստ Ա.Վ. Քունին, դարձուածքաբանական միաւորը բառերու կայուն համակցութիւն է, որոնք ամբողջութեամբ կամ մասամբ կը փոխեն իրենց իմաստները: [Kunin 2005, 488]: Ան կը նշանակէ, որ բառի մակարդակէն բարձր, կայունութիւնը եւ բառերու փոխուած իմաստները բառակապակցութիւններու չափորոշիչներ են այլ լեզուական միաւորներու հետ միասին, որոնք կը սահմանեն անոնց յատուկ կարգավիճակը լեզուական կառուցուածքին մէջ:

«Բայց եթէ կուգենք ճիշդ բնութագրել իմաստային գործածութիւնը, որ ընդունուած է ցանկացած խօսքային հասարակութեան մէջ եւ կը պատկանի նկարագրուած լեզուին, ապա պէտք է ոչ միայն նկարագրել այն: Մենք կարող ենք արդիւնքի հասնիլ միայն հասարակութեան մէջ ընդունուած հաւաքական գնահատականներու կիրառմամբ, ուստի պէտք է հաշուի առնել հասարակական կարծիքը: Միեւնոյն բանը տարբեր քաղաքակրթութիւններուն մէջ կարող է տարբեր նկարագրութիւններ ունենալ: Նման իմաստային սահմանումները պէտք է էական հետեւանքներ ունենան լեզուական միաւորներու ֆորմալ վերլուծութեան համար» [Zerkina 2011, 405-406]:

Այսպիսով, կապակցուած խօսքի ձեւաւորման եւ զարգացման համար շատ կարեւոր են բառապաշարի հարստացման ուղղութեամբ տարուող աշխատանքները [Ավագյան 1989, էջ 3]:

Կարելի է ըսել, որ դարձուածքները իմաստաւորուած են դրական կամ բացասական երանգով, եւ կիրառելով այս կամ այն դարձուածքը՝ մեր խօսքն ու վերաբերմունքը կը դրսեւորենք առաւել պատկերաւոր ու դիպուկ, առաւել յուզարտայայտչական երանգով:

Հետեւաբար, հնարաւորութեան սահմաններուն մէջ ուսուցիչը պէտք է հարստացնէ աշակերտներու բառապաշարը, անոնց մօտ ձեւաւորէ դարձուածքները ճիշդ ու դիպուկ կիրառելու կարողութիւն: Աշակերտները պէտք է սորվին, որ իրենց ըսելիքը ներկայացնելու համար կարեւոր է ոչ թէ բառերու քանակը, այլ բառի, արտայայտութեան տեղին, դիպուկ գործածութիւնը, եւ այստեղ օգնութեան կը հասնին դարձուածքները՝ որպէս ըսելիքի պատկերաւոր ներկայացման բաղադրիչներ: Դարձուածքներու կիրառմամբ մարդը իր վերաբերմունքը կը դրսեւորէ առարկաներու, երեւոյթներու եւ իրադարձութիւններու նկատմամբ:

Արեւմտահայերէն դարձուածքները դասաւանդելու ժամանակակից մեթոդիկաներ:

Այս աշխատանքին մէջ կ'առաջարկենք առանձնակի ուշադրութիւն դարձնել դարձուածքներու ուսուցանման եւ դասերը ծրագրաւորելու ժամանակ շաբաթական 15-30 րոպէ ժամանակ յատկացնել անոնց եւ մշտապէս ձեռքի տակ ունենալ նիւթերու որոշ ընտրանի՝ դասերը աշխուժացնելու եւ աշակերտներուն հետաքրքրի դարձնելու նպատակով:

Դարձուածքներու ուսուցանումը բարելաւելու եւ աւելի լաւ արդիւնքներու հասնելու նպատակով դասերը ծրագրաւորելու ժամանակ կարելի է համակցել ուսուցման տարբեր ժամանակակից մեթոդիկաներ:

Իր նախապատրաստական գրոյցին մէջ ուսուցիչը աշակերտներուն պէտք է բացատրէ, որ դարձուածքները ժողովրդական մտածողութեան արդիւնք են ու թէեւ առաջացած են խօսակցական լեզուին մէջ, սակայն ներթափանցած են գրական լեզու՝ հարստացնելով այն պատկերաւոր խօսքի միաւորներով: Դարձուածքներու առաջացման հիմքին մէջ մարդու կենսափորձն է, կենսափիլիսոփայութիւնը, բնութեան երեւոյթներու ճանաչումն ու կենդանիներու վարքագիծին տեղեակ ըլլալը:

Դարձուածքներու ուսուցումն արդիւնաւէտ կազմակերպելու համար մեր կողմէ ստորեւ կը ներկայացուին առաջադրանքներու քանի մը տարբերակներ, որոնք, արդիւնաւէտ կ'ըլլան դարձուածքներու իւրացման գործընթացին մէջ:

1. Պատկերաւոր քարտեր

Արեւմտահայերէն դարձուածքներու ուսուցանումը առաւել գրաւիչ է պատկերաւոր քարտերու միջոցով, որոնք կը պատկերեն դարձուածքի բառացի իմաստը, որ կը նպաստէ դարձուածքի մտապահման: Տես՝ նկ. 1, 2, 3 [Սարուխան 2010]:



Նկար՝ 1,2,3

Յիշողական տեխնիկայի ազդեցութիւնը դարձուածքներու մտապահման վրայ լայնօրէն ուսումնասիրած են Boers եւ այլք [Boers, etc, 2009: 367- 382, Boers, Lindstromberg, 2008, 189-216]:

Պատկերաւոր քարտերու մեթոդիկայի ընթացքին իւրաքանչիւր դարձուածքի ուսուցանումը կը բաժնենք երեք փուլի: Նախ, աշակերտներուն կը ներկայացնենք պատկերը գրատախտակին, համակարգչի վրայ կամ գունաւոր տպագրութեամբ, որ կը ներկայացնէ դարձուածքի առանձին տարրերու իմաստը, այնուհետեւ կու տանք բացատրութիւնը արեւմտահայերէնով. ապա միասին կը դիտարկուի գործածումը օրինակելի նախադասութեան մէջ: Վերջաւորութեան աշակերտներուն կ'առաջարկուի կազմել իրենց սեփական նմանատիպ նախադասութիւնը:

Ուսուցանման այս տարբերակը, թերեւս, աշակերտներու ամենանախընտրելին է, քանի որ ցանկացած տարիքի եւ գիտելիքներու տէր աշակերտները կը տպաւորուին զուարճալի թեմատիկ նկարքարտերով:

Նոր դարձուածքներ ներկայացնելու պարագային, նոյնպէս կարող ենք կիրառել քարտերը: Տուեալ պարագային առաջարկել աշակերտներուն կռահել՝ հիմնուելով նկարին եւ բառերուն վրայ: Ապա բացատրել իմաստը եւ բերել օրինակ:

2. Ամբողջացո՛ւր հետեւեալ բաց ձգուած տեղերը

Յաջորդ քայլը ամրապնդող առաջադրանքներն են, որոնցմէ ամենաազդուն կարելի է համարել «ամբողջացո՛ւր բաց ձգուած բառերը»: Այս ընթերցանութեան ընկալման առաջադրանք է, ուր բառերը համակարգուած կերպով բաց ձգուած են: Աշակերտները կը լրացնեն բացթողումները: Անոնց պատասխանները ճիշդ կը համարուի, եթէ անոնք ճշգրիտ կը համընկնին բացակայող բառերուն հետ: Օրինակ՝ «Մարդուն ----- ետին մնաց»: «Քանի օր է կինս ----- կուտէ»:

Իսկ որպէս տնային յաւելեալ աշխատանք կարելի է առաջարկել աշակերտներուն հետեւեալ տարբերակը՝ գրել կարճ շարադրութիւն՝ օգտագործելով հինգ նոր, հինգ արդէն իւրացրած դարձուածք:

3. «Ժամանակագրական հերթականութիւն/պատմութիւններու յօրինում» մեթոդիկա

Այս գրաւոր առաջադրանքի տեսակ է: Այն կարելի է իրականացնել եւ որպէս լսարանային, եւ որպէս տնային աշխատանք: Աշակերտներուն կ'առաջարկուի դարձուածքային արտայայտութիւնները ժամանակագրական կարգով տեղադրել յօրինուած փոքրիկ պատմութեան մէջ: Այս տարբերակը ամենալաւը կը գործէ բառապաշարը հարստացնելու նպատակով:

4. Բնագիրէն իմաստի կոռահման մեթոդիկա

Բնագիրէն իմաստի կոռահումը եւս մէկ առաջադրանքի տարբերակ է: Այն կը դրդէ աշակերտին ուշադրութիւն դարձնել բնագիրին եւ դարձուածքի իմաստը կոռահել բնագիրի բանալի բառերէն եւ նախադասութիւններէն:

5. «Փոխարինէ՛ յարմար դարձուածքով» մեթոդիկա

Դարձուածքները իւրացնելու եւ ամրապնդելու յաջորդ աշխատանքն է ընդգծուած բառերը փոխարինել թեմատիկ դարձուածքներով:

6. «Դարձուածքները կապեցէ՛ք իմաստներուն» մեթոդիկա

Նոր դարձուածքներ ներկայացնող եւ գիտելիքը ամրապնդող մէկ այլ տեսակի առաջադրանք կ'առաջարկենք կատարել դասարանին մէջ: Աշակերտներուն առաջադրանքի համար կը յատկացուի 15-20 րոպէ ժամանակ: Կ'առաջարկուի դարձուածքներով հարուստ բնագիր, որոնց իմաստը անհրաժեշտ է կոռահել բնագիրէն: Բնագիրը ընթերցելէ ետք անհրաժեշտ է առաջին սիւնակին մէջ տեղադրուած բնագիրէն կոռահած դարձուածքը համապատասխանեցնել երկրորդ սիւնակի բացատրութիւններուն:

7. Զննական մեթոդիկա

Դարձուածքներու ուսուցումը կարելի է կատարել զննական եղանակով. աշակերտներուն ցոյց տալով ժողովրդական քանի դարձուածքներու բառացի (ոչ դարձուածային իմաստով) նկարագարողումներ (անոնք բաւականին կ'աշխուժացնեն աշակերտներուն)՝ առաջարկելով գտնել, թէ ո՞ր դարձուածքն է պատկերուած, ի՞նչ կը նշանակէ այն, աշակերտներուն առաջարկել յիշել դարձուածքին հոմանիշ մէկ այլ դարձուածք:

8. «Դարձուածքին համապատասխան նկար» մեթոդիկա

Այս մեթոդով կարելի է կազմել քարտեր՝ տարբեր դարձուածքներու նկարներով, առանձին քարտերու վրայ գրել դարձուածքներ: Խմբային աշխատանքի միջոցով աշակերտներուն յանձնարարել միացնել համապատասխան նկարն ու դարձուածքը, այնուհետեւ անով կազմել նախադասութիւններ:

9. «Խաչբառ» մեթոդիկա

Կազմել խաչբառ, որ պէտք է լուծել դարձուածքներու բաց ձգուած բառերով կամ տրուած դարձուածքը արտայայտելով մէկ բառով:

10. «Կապակցուած խօսք ստեղծելու» մեթոդիկա

Հետաքրքիր առաջադրանք կարող է ըլլալ կապակցուած խօսք ստեղծելու յանձնարարութիւնը՝ դարձուածքներու կիրառմամբ, յատկապէս եթէ կապակցուած խօսքը

կառուցուի սիրած կենդանիի կամ որեւէ առարկայի վերաբերեալ: Բնագիրը առաւել հետաքրքիր ներկայացնելու եւ իրենց արարքներուն գնահատական տալու կարողութիւններու զարգացման համար ցանկալի է յանձնարարել, որ խօսքը կառուցուի «տուեալ առարկայի կամ կենդանիի անունէն», անոնք ներկայացնեն, թէ ինչպէ՞ս կ'անցնեն առօրեան իրենց տիրոջ հետ, ի՞նչ կը սիրեն, ի՞նչ յարաբերութիւններ ունին եւ այլն՝ գնահատականը տալով դարձուածքներու միջոցով:

Նմանատիպ յանձնարարութեան շնորհիւ կարող ենք զարգացնել աշակերտներու երեւակայութիւնը, ստեղծագործելու կարողութիւնը, նաեւ մտորելով իրենց արարքներու, վերաբերմունքի մասին՝ աշակերտները կը սորվին գնահատել սեփական վարքագիծը: Այս եղանակով միեւնոյն ժամանակ նպաստած կըլլանք եւ աշակերտներու բարոյական դաստիարակութեան, եւ երեւակայութեան, միտքը զարգացնելու խնդիրները՝ ձեւաւորելով սեփական վարքագիծն ու բնաւորութիւնը քննելու կարողութիւն:

Այս եղանակով աշակերտներուն դուրս կը բերենք միայն գիտելիքներու շրջանակներէն կաղապարուած մտածելու նեղ շրջանէն, կընդլայնենք անոնց սահմանափակ մտածողութիւնը եւ երեւակայութեան շնորհիւ անոնց կը հասցնենք դէպի գունագարդ իրականութիւն, նոր աշխարհ, ուր կարող են պատկերացնել ամէն ինչ, կարող են հաւատալ անգամ հրաշքներու, որոնք կոգեշնչեն մարդուն, դրական լիցքեր կը հաղորդեն:

11. «Նախադասութիւնը հարստացնելու» մեթոդիկա

Դարձուածքներու արտայայտչականութիւնն ու պատկերաւորութիւնը ընդգծելու նպատակով դասարանին մէջ աշակերտները կը գրեն պատմութիւն՝ կազմուած «չոր ու ցամաք» նախադասութիւններէ, ապա այն կը հարստացնեն դարձուածքներով: Այնուհետեւ ընթերցելով երկու տարբերակները՝ կը կատարեն համեմատութիւն, որու արդիւնքով ալ աշակերտներուն համար աւելի պարզ կը դառնայ, թէ որ պատմութիւնը առաւել մեծ ազդեցութիւն եւ տպաւորութիւն կը թողէ ունկնդրին վրայ, կ'առաջացնէ պատկերի իրական զգացողութիւն:

12. «Երկխօսութեան» մեթոդիկա

Աշակերտներու մէջ դարձուածքներու կիրառման հմտութիւն ձեւաւորելու համար կարելի է առաջարկել կազմել երկխօսութիւն՝ կազմուած հիմնականին դարձուածքներէ: Երկխօսութիւնը կարող է ըլլալ հեղինակի եւ ընթերցողի միջեւ, գրական հերոսներու միջեւ, ընթերցողի եւ հերոսի միջեւ եւ այլն: Այն կարող է առնչակից ըլլալ անցնելիք նիւթի հետ, կարող է նաեւ դասի թեմայէն դուրս ըլլալ:

Արեւմտահայերէն դարձուածքներ ուսուցանելու տնային առաջադրանքներ

Աշակերտներուն որպէս տնային առաջադրանք կարող ենք յանձնարարել.

1. Բառարանէն օգտուելով դուրս գրել այնպիսի դարձուածքներ, որոնք ցոյց կու տան.

Ա) դրական իմաստ արտայայտող դարձուածքներ,

Բ) բացասական իմաստ արտայայտող դարձուածքներ:

2. Բառարանէն օգտուելով գրել այնիպիսի դարձուածքներ, որոնք կազմուած են մարդու մարմինի մասի անուանումներով, օրինակ՝ գլուխ, աչք, լեզու, բերան, քիթ, ականջ, ոտք, ձեռք եւ այլն:

3. Խմբային աշխատանքի եղանակով խումբերուն յանձնարարել բառարանէն օգտուելով գրել դարձուածքներ, որոնք առաջացել են.

Ա) գիւղատնտեսութենէն,

Բ) գեղարուեստական ստեղծագործութիւններէն, ժողովրդական բանահիւսութենէն, առածներէն, ասացուածքներէն,

Գ) երաժշտութենէն, կերպարուեստէն, պարարուեստէն,

Դ) շարժանկարներէն եւ թատրոնէն,

Ե) տարբեր գիտութիւններէ,

Զ) ռազմական արուեստէն եւ մարզական կեանքէն,

Է) Աստուածաշունչէն եւ առասպելներէն:

Դարձուածքները գրելէ ետք իւրաքանչիւր խումբ պէտք է նկարէ գրուած դարձուածքներէն մէկը՝ գեղեցիկ ու պատկերաւոր: Կարելի է նաեւ դարձուածքներէն մէկը դարձնել վերնագիր եւ գրել կապակցուած խօսք: Նմանատիպ յանձնարարութեան շնորհիւ ոչ միայն կը հարստանայ աշակերտներու բառապաշարը, այլ նաեւ միջառարկայական կապի միջոցով կը զարգանայ աշակերտներու երեւակայութիւնը, պատկերաւոր մտածողութիւնը, ստեղծագործելու կարողութիւնը:

Եզրակացութիւն: Այսպիսով՝ դարձուածքներու ուսուցման միջոցով հնարաւոր է հարստացնել աշակերտներու բառապաշարն ու զարգացնել խօսքը՝ այն դարձնելով առաւել գեղեցիկ, դիպուկ ու պատկերաւոր, ձեւաւորել ըսելիքը առաւել արտայայտիչ ներկայացնելու կարողութիւն, բացի անկէ, ծանօթանալով դարձուածքներուն՝ աշակերտները ձեռք կը բերեն տարբեր տեղեկութիւններ եւ գիտելիքներ, կը ծանօթանան հայ եւ օտար մշակոյթին ու առասպելներուն, պատմական անցքերուն ու իրադարձութիւններուն, որ կը նպաստէ անոնց մտահորիզոնի ընդլայնման, կը խթանէ ընթերցասիրութիւնն ու հետաքրքրասիրութիւնը դէպի հայ եւ օտար մշակոյթը, կը ծանօթանան ազգային սովորոյթներուն ու ծէսերուն:

Համապատասխան բառապաշարի ուսուցումը կարելի է հաճելի եւ զուարճալի դարձնել ուսումնառութեան իւրաքանչիւր մակարդակի կիրառելով տարբեր մեթոդներ: Նկարագրուած մեթոդները կը նպաստեն արեւմտահայերէն բառապաշարի իւրացման, բանաւոր եւ գրաւոր խօսքի հմտութիւններու զարգացման, կը հարստացնեն ուսուցիչի լեզուի ուսուցման մեթոդական գործիքակազմը, դասաւանդման գործընթացը կը դարձնեն հետաքրքրական եւ մատչելի, կը նպաստեն աշակերտներու ներգրաւուածութեան եւ

Արեւմտահայերէն դարձուածքներու ուսուցումը որպէս աշակերտներու բառապաշարի հարստացման միջոց մատուցուող նիւթը անմիջապէս լսարանին մէջ ընկալելուն ու իւրացնելուն: Արդիւնքը աշակերտները աւելի լաւ կը պատկերացնեն արեւմտահայերէն դարձուածքներու եւ անոնց գործածման տիրոյթներու մասին:

Գրականութեան ցանկ

- Abeghyan 1974** - Abeghyan M., Yerker, Z, Yerevan, HSSH GA hrat., 1974, 852 ej. (in Armenian)
- Abrahamyan 1973** - Abrahamyan S.G., Ashakertneri khosk'i zargats'umy, -Yerevan, «Luys», 1973, 75 ej. (in Armenian)
- Avagyan 1989** - Avagyan V, Barragitut'yan usuts'umy dprots'um, Yerevan, «Luys», 1989, 158 ej: (in Armenian)
- Badikyan 2000** - Badikyan KH., Dardzvatsayin vochabanut'yun, Yerevan, YePH hrat., 2000, 210 ej. (in Armenian)
- Bediryan 1973** - Bediryan P., Zhamanakakits' hayereni dardzvatsabanut'yun, Yerevan, Luys, 1973, 230 ej: (in Armenian)
- Gyulbudaghyan 1978** - Gyulbudaghyan S., Hayots' lezvi met'vodika, Yerevan, YePH hrat., 1978, 326 ej. (in Armenian)
- Sarukhan 2010** – Sarukhan AL., Tes Khosk'erd. hayeren asats'uatsk'ner, Gahire, tp. Sahak Mesrop, 1962, 107 ej. (in Armenian)
- Suk'iasyan** - Galstyan 1975 - Suk'iasyan A., Galstyan S., Hayots' lezvi dardzvatsabanakan barraran, Yerevan, YePH hrat., 1975, 614 ej: (in Armenian)
- Boers - Lindstromberg - Littlemore - Stengers - Eyckmans J 2008** - Boers F., Lindstromberg S., Littlemore J., Stengers H., & Eyckmans J., Variables in the mnemonic effectiveness of pictorial elucidation. In F. Boers & S. Lindstromberg (Eds.), Cognitive Linguistic Approaches to Teaching Vocabulary and Phraseology, Berlin /New York: Mouton de Gruyter, 2008., 28 pages.
- Kunin 2005** - Kunin A.V., A course on modern English phraseology. Dubna: Dubna: Izd. centr «Feniks», 2005, 488 pages.
- Zerkina 2011** - Zerkina, N.N. (2011) Explicit and implicit representation of the concept WHITE in English. (pp.405-406) In Cognitive studies of the language. Issue VIII. Problems of linguistic consciousness: Proceedings of the International Scientific Conference held on 15-17 September 2011. 2011. Moscow: Linguistics Institute of the Russian Academy of Sciences; Tambov: Publishing house of Derzhavin Tambov State University.